



ԱՅԾԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 07.06.2017 թվականի թիվ 148-Լ որոշմամբ հաստատված «Երիտասարդ փաստաբանների աջակցման ծրագրի» **(այսուհետ նաև՝ Ծրագիր)** 3.6 ենթակետի, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի 21.06.2017 թվականի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված «Աշխատասենյակից օգտվելու ընթացակարգի» **(այսուհետ նաև՝ Ընթացակարգ)** 2-րդ կետի պահանջներով,

Հիմք ընդունելով Փաստաբանների պալատում երիտասարդ փաստաբանների անվճար օգտագործմանը հատկացված աշխատասենյակից **(այսուհետ նաև՝ Աշխատասենյակ)** օգտվելու հայտերի ընդունման և քննարկման ժամանակահատվածը սահմանելու, ինչպես նաև հարակից հարցերը կանոնակարգելու անհրաժեշտությունը,

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. 2022 թվականի հուլիս-դեկտեմբեր ժամանակահատվածում Աշխատասենյակից օգտվելու համար ընդունել հայտեր՝ 2022 թվականի հունիսի 27-ից մինչև 2022 թվականի հունիսի 30-ը ներառյալ:

2. Սահմանել, որ՝

2.1) Աշխատասենյակից օգտվելու հայտերն ընդունվում են էլեկտրոնային փոստով (ստորագրված և սկանավորված տարբերակով) info@advocates.am կամ

27 հունիսի 2022թ.

թիվ 2-Լ

ք.Երևան

youthboard@advocates.am էլեկտրոնային հասցեով, ինչպես նաև յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 10:00-ից մինչև 17:00-ը, ՀՀ, ք. Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ հասցեում:

2.2) Հարցազրույցն անցկացվելու է ՀՀ, ք. Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ հասցեում 2022 թվականի հուլիսի 04-ին, ժամը 15:00-ից սկսած՝ հավակնորդների հետ նախապես համաձայնեցված ժամին:

2.3) Փոստով ուղարկված հայտերն ընդունված չեն համարվի, եթե ՀՀ փաստաբանների պալատը փոստային առաքանին փաստացի ստանա 2022 թվականի հունիսի 30-ից հետո:

3. Հաստատել Աշխատասենյակից օգտվելու համար հայտի ձևը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ փաստաբանների պալատի
Երիտասարդական խորհրդի նախագահ՝
Միքայել Դանիելյան

Հավելված
ՀՀ փաստաբանների պալատի Երիտասարդական
խորհրդի 27.06.2022թ. թիվ 2-Լ որոշման

ՀՀ փաստաբանների պալատին

_____ից
(անուն, ազգանուն)

արտոնագրի № _____ տրված՝ _____ թ.

հասցե՝ _____

Էլեկտրոնային փոստի հասցե՝ _____

հեռախոս՝ _____

«___» հունիս 2022թ.

ՀԱՅՏ

Սույնով հայտնում եմ, որ ցանկանում եմ օգտվել Աշխատասենյակից:

Մասնագիտական ուղղվածությունը՝ _____
(նշել քրեական կամ քաղաքացիական և վարչական)

Աշխատանքային գործունեության իրականացման վերաբերյալ
տեղեկություն¹ _____

Գիտական և/կամ մանկավարժական բնագավառում աշխատանքային գործունեություն
իրականացնելու վերաբերյալ տեղեկատվություն² _____

Հայտնում եմ, որ՝

- չունեմ աշխատասենյակ,
- համաձայն եմ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 07.06.2017թ. թիվ 148-Լ որոշմամբ հաստատված Երիտասարդ փաստաբանների աջակցման ծրագրով և ՀՀ փաստաբանների պալատի Երիտասարդական խորհրդի 20.06.2017թ. թիվ 1-Լ որոշմամբ հաստատված աշխատասենյակից օգտվելու ընթացակարգով սահմանված դրույթների հետ,
- համաձայն եմ անվճար իրավաբանական օգնություն տրամադրել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 07.06.2017թ. թիվ 148-Լ որոշմամբ հաստատված Երիտասարդ փաստաբանների աջակցման ծրագրով և ՀՀ փաստաբանների պալատի Երիտասարդական խորհրդի 20.06.2017թ. թիվ 1-Լ որոշմամբ հաստատված աշխատասենյակից օգտվելու ընթացակարգով սահմանված նվազագույն քանակով:

Դիմող՝ _____
(ստորագրություն)

¹ Պետք է նշվի ինչպես մասնագիտական, այնպես էլ ոչ մասնագիտական աշխատանքային գործունեության մասին

² Նշվում է գործատու(ներ)ի վերաբերյալ տեղեկություն, մասնավորապես՝ գործատու(ներ)ի տվյալները (անուն, ազգանուն, հայրանուն, իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը), աշխատաժամանակի տևողությունը